ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
"ԱՊՀ ԳՈՐԳԵՐ" ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի՝ Պայմանագրի, Արտադրական, առեւտրական, վարկաֆինանսական, ապահովագրական եւ
խառը անդրազգային միավորումների ստեղծմանը եւ զարգացմանը աջակցելու մասին 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Համաձայնագրի դրույթներով,

ընդունելով թեթեւ արդյունաբերության ձեռնարկությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար ջանքերի միավորման եւ համակարգման կարեւորությունը,

ելնելով գորգերի եւ գորգարտադրանքի մրցունակության բարձրացման անհրաժեշտությունից,

մեծ նշանակություն տալով շուկայագիտության կատարելագործմանը եւ ապրանքաբաշխիչ ցանցի զարգացմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը աջակցում են "ԱՊՀ գորգեր" անդրազգային կորպորացիա (այսուհետ՝ Կորպորացիա) ոչ առեւտրական կազմակերպության ստեղծմանը սեփականության տարբեր
ձեւերի ձեռնարկությունների եւ կազմակերպությունների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 2

Կորպորացիայի հիմնական նպատակն է՝

գորգերի եւ գորգարտադրանքի արտադրության զարգացում,

այդ արտադրանքի մրցունակության բարձրացում,

գորգարտադրանքի արտադրողների եւ հումքի մատակարարների միջեւ փոխշահավետ կապերի զարգացում,

շուկայագիտության եւ տեխնիկական քաղաքականության բնագավառում համաձայնեցված գործողությունների իրականացում,

թողարկվող արտադրանքի սպառողական հատկանիշների, տեխնոլոգիական եւ տնտեսական չափանիշների բարելավման ուղղությամբ հանձնարարականների մշակում,

շուկայի պահանջների մասին տեղեկության պատրաստում,

գորգերի եւ գորգարտադրանքի իրացման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

ՀՈԴՎԱԾ 3

Կորպորացիան բաց է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների այլ տնտեսվարող սուբյեկտների միանալու համար՝ Կորպորացիայի հիմնադիր փաստաթղթերով
նախատեսված կարգով եւ պայմաններով:

ՀՈԴՎԱԾ 4

Անհրաժեշտության դեպքում, Կողմերը կարող են Կորպորացիայի մասնակիցներին տրամադրել պետական աջակցություն եւ երաշխիքներ, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրություններով:

ՀՈԴՎԱԾ 5

Կորպորացիայի հիմնադիրները իրավաբանական անձինք են, որոնք ընդունում են Կորպորացիայի նպատակներն ու խնդիրները, կատարել են հիմնադիր մուծումները, ստորագրել են նրա հիմնադիր պայմանագիրը, պահպանում են կանոնադրությունը եւ հիմնադիր պայմանագիրը:

Կորպորացիայի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են հիմնադիր փաստաթղթերով:

ՀՈԴՎԱԾ 6

Կորպորացիան իրավաբանական անձ է եւ անցնում է պետական գրանցում Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմիններում՝ Ռուսաստանի օրենսդրությանը համապատասխան:

Կորպորացիայի մասնակից ձեռնարկությունները եւ կազմակերպությունները պահպանում են իրավաբանական անձի կարգավիճակը, կազմակերպահրավական ձեւը, պետական եւ գերատեսչական պատկանելությունը եւ իրականացնում են իրենց գործունեությունը իրենց պետությունների օրենսդրության հիման վրա՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակից են նրանք հանդիսանում:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրը բաց է Համաձայնագրի նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների միանալու համար՝ բոլոր Կողմերի համաձայնությամբ, միանալու մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով: Միանալը համարվում է ուժի մեջ մտած՝ միանալու համաձայնության մասին վերջին ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել առանձին արձանագրություններով ձեւակերպված փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը շահագրգիռ Կողմերի միջեւ լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած պետությունների կողմից ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն

ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 12

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին եւ կարգավորելով Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը կնքվում է 5 տարով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 5-ամյա ժամանակահատվածով, եթե Կողմերը այլ որոշում չընդունեն:

Կատարված է Յալթա քաղաքում 1999 թվականի հոկտեմբերի 8-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի հունիսի 26-ից: